ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«31» հոկտեմբերի 2019 թվականի N:271 ք.Գյումրի

ՄՈՎՍԵՍ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի, 29-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի N:1239-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 2-րդ, 4-րդ, 11-րդ և 22-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետի 2019 թվականի հոկտեմբերի 31-ի զեկուցագիրը.

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Մովսես Մանուկյանին 2019 թվականի նոյեմբերի 1-ին գործուղել քաղաք Երևան՝ «Արմենիա Մարիոթ» հյուրանոցի «Լևոն Կիլիկիացի» սրահում կայանալիք «Անասնապահության զարգացում Հայաստանում՝ հարավ-հյուսիս» և «Անասնապահության զարգացում Հայաստանի հարավում» ծրագրերի համատեղ Ղեկավար կոմիտեի նիստին մասնակցելու նպատակով:
2. Գործուղման տևողությունը մեկ օր՝ 2019 թվականի նոյեմբերի 1-ին:
3. Մովսես Մանուկյանի՝ գործուղման գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետի պարտականությունների կատարումը վերապահել նույն վարչության գյուղատնտեսության բաժնի պետ Անդրանիկ Նալբանդյանին:

4. Մովսես Մանուկյանին՝ գործուղումից վերադառնալուց և աշխատանքի ներկայանալուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, ներկայացնել հաշվետվություն գործուղման ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ՝ համաձայն հաստատված ձևի:

Վ.ԳՐԻԳՈՐՅԱՆ
փոխարինող

Իսկականի հետ ճիշտ է